

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա.Զ. Մարգարիտ Արծրունյան-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/16-Ա ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|-----------------|--|
| 2 | <p>ՀՀ դրոշ 0.75x1.5մ՝ եռագույն, վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով, 100% պոլիէսթերային գործվածքից, գործվածքի խտությունը՝ ոչ պակաս 90 գ/մ²-ից: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի ±2%-ը: Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակված լինի երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո՝ 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով): Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով՝ 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Դրոշը պետք է կարված լինի շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարված դրոշը պետք է կցակարված լինի տարբեր թելերով՝ վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան: Դրոշի ամրացման եղանակը՝ գրպանի միջոցով ձողին կցելով: Գրպանի լայնությունը պետք է լինի դրոշի երկարության 5%-ից ոչ ավելի և չգերազանցի 10 սմ: Այլ պայմաններ. * Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված, առանձին փաթեթավորված՝ փաթեթավորման միավորի վրա պետք է փակցված լինի պիտակ, որը պետք է պարունակի արտադրատեսակի անվանումը և դրա չափերը: *** Դրոշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ՀՍ 50-2012 ստանդարտի պահանջներին:</p> |

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ա.Զ. Մարգարիտ Արծրունյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԵԱՃԱՊՁԲ-23/16-Ա ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|------------|----------------------------|
| | технические характеристики |
| 2 | |